ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 4, 1953 Общественные науки

Կ. Դաֆթարյան

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ Ի. Վ. ՍՏԱԼԻՆԻ «ՄԱՐՔՍԻԶՄԸ ԵՎ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՅՍԻ ՏԱԿ

Ի. Վ. Ստալինը իր «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» հանճարեղ աշխատության մեջ հանգամանորեն վերլուծեց Ն. Մառի կեղծ գիտական դրույթները և ցույց տվեց սովետական լեզվաբանության զարգացման հետագա ուղիները։

Ընկեր Ստալինի աշխատությունը վճռական նշանակություն ունեցավ նաև սովետական հնագիտության զարգացման համար, որովհետև գիտության այդ ասպարեզում ևս գրեթե նույն վիճակն էր տիրում, ինչ որ լեզվաբանության մեջ, մանավանդ որ Ն. Մառն իբրև հնագետ, մեծ չափով իր լեզվաբանական աշխատությունների մեջ կամայական կերպով օգտագործել էր արխեոլոգիական տվյալներ իր սխալ տեսակետները «հիմնավորելու» համար։ Այդ է պատճառը, որ ընկեր Ստալինի աշխատությունը լույս տեսնելուց հետո հրապարակ եկան մի քանի ուսումնասիրություններ և քննադատական հոդվածներ, որոնք ցույց տվին արխեոլոգիայի բնագավառում Ն. Մառի մինչ այդ անքննադատորեն ընդունվող սխալ տեսակետները[1]։

Մեզ, Հայաստանում աշխատող հնագետներիս անհրաժեշտ է ուժեղ պայքար ծավալել Ն. Մառի հնագիտական կեղծ դրույթների դեմ, որովհետև Ն. Մառն իբրև հնագետ երկար տարիներ աշխատել է Հայաստանում, հետևապես նրա ազդեցությունը խիստ մեծ է եղել Հայաստանով զբաղվող հնագետների ու նրանց աշխատությունների վրա[2]։

Անհնարին է մի փոքրիկ հոդվածում ընդգրկել սովետական հնագիտության անելիքները ընկեր Ստալինի «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» աշխատության լույսի տակ, այդ պատճառով մենք այստեղ կանգ կառնենք մի քանի կարևոր խնդիրների վրա։

1. Ն. Մառի ոչ մարքսիստական ելակետները, որոնք նա մշակել էր լեզվի, այսպես կոչված նոր ուսմունքի մեջ, սովետական հնագիտության վրա ունե-

---

[1] М. П. Артамонов, Труды товарища Сталина по вопросам языкознания и советская археология, „Советская археология", XV, 7—16, М.—Л. 1951, „Выше уровень критики и самокритики в области древней истории". ВДИ, № 3 (37), стр. 3—8, М. В. Левченко, Значение работ И. В. Сталина по вопросам языкознания для советского византиноведения, „Византский временик", том IV, стр. 3—10, Москва, 1951 и т. д. „Покончить с проявлениями марризма в археологии" и „Вопросы истории", 1952, № 12, 11 17.

[2] *Մինչև այժմ այդ կարևոր հարցի շուրջը Հայաստանում լույս է տեսել միայն ընկ. Բ. Առաքելյանի հոդվածը «Տեղեկագրում»։ Բ. Առաքելյան, Ի. Վ. Ստալինի «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» աշխատությունը և մեր խնդիրները։ Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (հասարակական գիտություններ), 1951, № 6, Երևան։*

ցան խիստ բացասական ազդեցություն։ Հնագիտության մեջ երկար ժամանակ տիրապետում էր Ն. Մառի այն սխալ կարծիքը, որ երբև թե խոսակցական լեզվին նախորդել է «կինետիկ» կամ ձեռքի լեզուն, երբ մարդիկ միմյանց հետ բացատրվել են համրերի նման, միայն ձեռների շարժումով։ Ընկեր Ստալինը ցույց տվեց, որ մտածողությունն անխզելիորեն կապված է լեզվի հետ։ Ընկեր Ստալինն այդ հարցի մասին ընկերներ Դ. Բելկինին և Ս. Ֆուրերին տված պատասխանի մեջ դրել է.

«Ես այդ պատասխանի մեջ քննադատում եմ Ն. Յա. Մառին, որը խոսելով լեզվի (հնչյունային) և մտածողության մասին, լեզուն անջատում է մտածողությունից և այդպիսով ընկնում է իդեալիզմի մեջ։ Հետևաբար, իմ պատասխանի մեջ խոսքը վերաբերում է լեզվին տիրապետող նորմալ մարդկանց։ Լսելորում, ես պնդում եմ, որ մտքերն այդպիսի մարդկանց մոտ կարող են ծագել միայն լեզվական նյութի բազայի վրա, որ լեզվական նյութի հետ չկապված մերկ մտքեր լեզվին տիրապետող մարդկանց մոտ գոյություն չունեն»[1]։

Դրանից հետևում է, որ այսպես կոչված կինետիկ լեզուն մարդկային հասարակության զարգացման ստորին օղակներում գոյություն չի ունեցել և «շարժուձևի» լեզուն չի նախորդել հնչյունային լեզվին, ինչպես կարծել է Ն. Մառը և ինչպես այդ բանն իբրև դոգմա ընդունել են նրա «աշակերտները» և հնագիտության մեջ արմատավորել այդ սխալը մինչև ընկեր Ստալինի ելույթը։

Մտածողությունը, կապված լինելով լեզվի հետ, հանդես է եկել հենց սկզբում էլ հնչյունային լեզվի միջոցով, հետևապես նախնադարում ևս մարդկանց մեջ մտքերի փոխանակությունը կատարվել է խոսակցական լեզվի միջոցով։

Մարքսիզմն արդեն վաղուց հիմնավորել է այն ճիշտ տեսակետը, որ լեզուն նախնադարյան հասարակության մեջ հանդես է գալիս աշխատանքի պրոցեսում, իբրև մարդկանց միմյանց հետ հաղորդակցելու անհրաժեշտ միջոց։ Դրան հակառակ, Ն. Մառը անտեսում էր այդ անհրաժեշտությունը և լեզվի ծագումը բացատրում էր իբրև տոտեմների վրա ազդելու մագիկ գործողություն։ Այդ պատճառով էլ ընկեր Ստալինը Ն. Մառի հնչյունային լեզվի ծագման վերաբերյալ սխալ տեսակետն անվանում է «աշխատա-մոգական» խժդժաբանություն»։

Սովետական հնագետներն ընկնելով Ն. Մառի բացասական ազդեցության տակ, հնչյունային լեզվի առաջ գալը կապում էին վերին պալեոլիթի հետ, մարդու ֆիզիկական նոր տիպի Hamo sapiens-ի առաջ գալու հետ, իսկ ստորին և միջին պալեոլիթը համարում էին կինետիկ լեզվի շրջան։ Այդպես էին Ռավդոնիկասը, Օֆիմենկոն, Բարիսկովսկին և այլն։ Այդ հարցում պալեոլիթի մասնագետ Զամյատնինը առաջ գնալով, այն տեսակետն էր պաշտպանում, որ արվեստը, հատկապես կերպարվեստը և նկարչությունը վերին պալեոլիթումն է ծագել և հետագայում զարգացել միայն այն պատճառով, որ այն ժամանակ խոսակցական լեզուն ծայր աստիճան աղքատ էր և պրիմիտիվ, մարդիկ գծագրական պատկերների միջոցով աշխատում էին հարստացնել միմյանց հետ հաղորդակցելու միջոցները, այսինքն լեզուն[2]։

---

[1] Ի. Վ. Ստալին, «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը», էջ 104—105։

[2] М. И. Артамонов, Труды товарища Сталина по вопросам языкознания и советская археология, стр. 9.

Այս տեսակետները, որոնք առաջ էին գալիս Մառի լեզվի մասին ունեցած կարծիքներից, որ իբրև թե արտաքին երևույթների մասին մարդիկ սկզբում ոչ թե մտածում, այլ միայն ընկալում էին իբրև միֆական գերբնական կերպարներ և այդ ընկալումը արտահայտում էին ձեռքերի շարժումով (տոտեմական լեզու), ոչ մի առնչություն չունեն մարքսիզմի հետ։

Ընկեր Ստալինն այդ հարցի մասին գրել է.

«Հնչյունային լեզուն մարդկության պատմության մեջ մեկն է այն ուժերից, որոնք օգնել են մարդկանց՝ անջատվելու կենդանական աշխարհից, միավորվելու հասարակությունների մեջ, զարգացնելու իրենց մտածողությունը, կազմակերպելու հասարակական արտադրությունը, հաջող պայքար մղելու բնության ուժերի դեմ և հասնելու այն պրոգրեսին, որն ունենք մենք ներկայումս։

Այս տեսակետից այսպես կոչված ժեստերի լեզվի նշանակությունը, նրա ծայրահեղ աղքատության և սահմանափակվածության պատճառով, չնչին է։ Դա, իսկապես, ոչ թե լեզու է և նույնիսկ ոչ թե լեզվի սուրոգատ, որը կարող է այսպես թե այնպես փոխարինել հնչյունային լեզվին, այլ ծայրահեղորեն սահմանափակ միջոցներ ունեցող օժանդակ միջոց, որից երբեմն օգտվում է մարդը իր խոսքի մեջ այս կամ այն մոմենտն ընդգծելու համար»[1]։

Ընկեր Ստալինի այս հստակ ցուցմունքը հնագետների վրա պարտականություն է դնում բոլորովին նոր վերաբերմունք ցուցաբերել մարդկային հասարակության նախնական շրջանի պատմության կարևոր հարցերի վերաբերմամբ և ազատել այդ շրջանի պատմությունը մառական պրիմիտիվացումից։

2. Հնագիտության մեջ մառականության ազդեցությունը խիստ բացասաբար է արտահայտվել հասարակական ֆորմացիաների ուսումնասիրության խնդրում։

Հարցն այն է, որ Ն. Մառն իր լեզվի նոր ուսմունքը սկզբում կառուցեց միգրացիոն տեսության վրա։ Նա լեզուների մի մեծ խումբ անջատեց մյուսներից և անվանեց դրանք հաբեթական լեզուներ, իսկ այդ լեզուները կրող ժողովուրդներին՝ հաբեթական ժողովուրդներ։ Սկզբում այդ հաբեթական լեզուները միմյանց ազգակից և միևնույն նախալեզվից ծագում առած լեզուներ էին համարվում և քանի որ այդ լեզուների մեջ նա դրեց նաև աշխարհագրորեն միմյանցից խիստ հեռու գտնվող ժողովուրդների և ցեղերի լեզուներ, այդ պատճառով նա փորձեց ցույց տալ, թե դրանք ինչպես են, իբրև թե, ցրվել աշխարհի տարբեր կողմերը։ Մինչև այստեղ Ն. Մառի հաբեթաբանական ուսմունքը ոչ մի բանով չէր տարբերվում բուրժուական լեզվաբանությունից և այդ պատճառով բուրժուական գիտնականներից շատերն այդ հաբեթական լեզվախմբի գոյությունն այս կամ այն չափով ընդունում էին։

Շուտով Ն. Մառն իր «ուսմունքի» մեջ մտցրեց նաև այնպիսի լեզուներ, որոնք միմյանց ցեղակից չէին և որևէ լեզվական նմանություն չունեին մյուսների հետ։ Այդպիսով, Ն. Մառը հրաժարվեց իր նախկին տեսակետից և միանգամայն ժխտելով ժողովուրդների տեղափոխման հնարավորությունը՝ հաբեթական լեզվախումբը փոխարինեց լեզուների զարգացման «հաբեթական տեսությամբ», որը վերջ ի վերջո անվանվեց «լեզվի նոր ուսմունք»։ Ն. Մառն այստեղ արդեն ոչ թե մի շարք այսպես կոչված ցեղակից լեզուների իրար հետ ունեցած կապերն էր որոնում, այլ տալիս էր ընդհանուր առմամբ բոլոր լեզու-

[1] Ի. Վ. Ստալին, «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը», էջ 107—108։

ների ծագման և զարգացման հարցերի վերաբերյալ իդեալիստական և հաճախ աբսուրդի հասնող մեկնություններ։

Այստեղ էր, որ Ն. Մառն առաջ քաշեց լեզուների և կուլտուրաների ստադիալ զարգացման իր տեսությունը։ Այդ տեսությունն արդեն բացարձակապես ժխտում էր ժողովուրդների գաղթը և ամեն մի երևույթ բացատրում էր այսպես կոչված ստադիալ զարգացումով։

Այս տեսությունն իր մեջ որևէ մարքսիստական բան չէր պարունակում, ընդունում էր լեզվի զարգացման մեջ հանկարծակի պայթյունների տեսությունը և լեզվական նոր որակների հանդես գալը։

Ընկեր Ստալինը սպառիչ կերպով ցույց տվեց, որ լեզուն վերնաշենքային երևույթ չէ և հետևապես նա դասակարգային չէ, որ լեզուն զարգանում է ոչ թե պայթյուններով, այլ աստիճանական եղանակով, երկար ժամանակի ընթացքում. նա առանձին դասակարգերի հետ չի ծնվում և նրանց հետ չի մահանում։

Ն. Մառի ստադիալ զարգացման տեսությունը, որ լեզվի հետ հավասարապես օգտագործվում էր նաև կուլտուրաների ծագման և զարգացման հարցերի մշակության համար, աչքաթող էր անում պատմական կոնկրետ նյութը, ժամանակը, պատմական միջավայրը։ Լեզվի տեսությունը հիմնավորելու համար Ն. Մառն օգտագործում էր նաև հնագիտական նյութը, բայց խիստ կամայական կերպով և առանց որևէ պատմականության։

Մառի «աշակերտները» ստադիալ զարգացման տեսությունը լայն չափերով կիրառում էին զուտ հնագիտական խնդիրներ լուծելու ժամանակ։ Հատկապես մեծ տարածում ունեցավ Մառի «տեսությունը» կուլտուրաների ծագման, զարգացման և տարածման խնդիրներում։ Որևէ կուլտուրա ուսումնասիրելու համար այլևս հարկ չկար գիտենալ նրա միջավայրի պատմությունը, լեզուն, ուսումնասիրել արձանագրությունները և այլն։ Մի քանի ձևերի նմանողությունը հիմք էր տալիս հերքել դարերի ընթացքում ստեղծված պատմությունը, ժամանակակից պատմագիրների և արձանագրությունների վկայությունները և վկայակոչելով Ն. Մառին, ասել որևէ մի անհեթեթ կարծիք։

Հայաստանի զանազան շրջանների և այլ տեղերի հնագույն կուլտուրաների մեջ նկատվող որոշ նույնությունները կամ նմանությունները համարվել են միևնույն ստադիալ զարգացման արդյունք և ոչ թե բացատրվել են կուլտուրական կապերով կամ ցեղերի և ժողովուրդների տեղաշարժով։

Հնագետներից շատերը հետևելով Ն. Մառի ստադիալ զարգացման կեղծ մարքսիստական տեսության, էտնիկական խմբերի զարգացումը կապեցին լեզվի զարգացման տեսության հետ և այնքան առաջ գնացին այդ հարցում, որ սկսեցին ցեղերի անունով կոչել տարբեր միջավայրերի զարգացման աստիճանները։ Այսպես, օրինակ, առաջ եկան սկիֆիզացիա, գոտիզացիա, սարմատիզացիա և այլն. որոնք ցույց էին տալիս ոչ թե ցեղերի քայքայում և ասիմիլյացիա, ինչպես կարելի է ենթադրել, այլ զարգացման որևէ պայմանական աստիճան։ Օրինակ, ըստ պրոֆեսոր Ռավդոնիկասի սկիֆիզացիան ցույց է տալիս որևէ տեղում տոհմատիրական կարգերի հաստատում, սարմատիզացիան՝ տոհմատիրական կարգերի քայքայում, գոտիզացիան՝ ֆեոդալականացում և այլն։

Հնագետները շատ դեպքերում իրարից շատ հեռու գտնվող և միմյանց հետ անմիջական առնչություն չունեցող ցեղերի զարգացումը կապում էին միմյանց հետ որևէ անունով, որպեսզի ցույց տան նրանց զարգացման միևնույն աստի-

ճանի վրա գտնվելը։ Պարզ է, որ այդպիսի դեպքերում այդ աշխատանքների մեջ անհնարին է փնտրել որևէ պատմական հարցի կոնկրետ լուծում, որովհետև նման աշխատությունների համար պատմական միջավայրը, ժամանակը և կոնկրետ նյութը էական նշանակություն չունեն և, այսպես կոչված, ուսումնասիրողն իր ձեռքում արդեն ունի Ն. Մառի տեսության սխեման, որով և նա չափում է ամեն ինչ, որտեղ էլ նա գտնվի։

Մառի ստադիալ զարգացման տեսության հետ է կապված, ինչպես ասացինք, ցեղերի տեղաշարժի լրիվ չափով մերժումը և կուլտուրաների մեջ հանդես եկող ընդհանրություններն ու նմանությունները միևնույն ստադիային վերագրելը, ինչպես անում էր Մեշչանինովը։

Ինչ խոսք, որ տարբեր կուլտուրաների մեջ զարգացման միևնույն աստիճանի վրա ի հայտ են գալիս համանման երևույթներ, սակայն այդ երևույթներն իրենց կոնկրետ միջավայրի ազդեցության և ընձեռած հնարավորությունների շնորհիվ, ինչպես նաև հարևան երկրների ազդեցության շնորհիվ, ստանում են տեղական բնույթ, ուստի ընդհանուր գծերով կուլտուրաներն իրար նման լինելով, իրենց արտահայտության մի շարք երևույթներով տարբերվում են միմյանցից։ Բացի այդ, նույնանման երևույթները շատ դեպքերում արդյունք են նրանց միևնույն արմատից ծագած լինելուն։ Այնպես որ Ն. Մառի ստադիալ զարգացման տեսությունը միանգամայն սխալ է եղել և այժմ Մառի կողմից մերժված ֆորմալ տիպոլոգիական մեթոդը մեր սովետական հնագետները պետք է կիրառեն տարբեր կուլտուրաների ինչպես ընդհանուր գծերն ուսումնասիրելու, այնպես էլ նրանց մեջ տարբերությունները գտնելու և նրանց բացատրությունը տալու համար։ Պետք է համարձակ կերպով առաջ քաշել փոխազդեցությունների և կուլտուրաների տարածման հարցը գաղթերի միջոցով։

Սովետական գիտության ընդունած ցեղախմբերի տեղաշարժը ֆաշիստական ռասայական տեսության հետ որևէ կապ չունի, այլ, ընդհակառակը, սովետական հնագիտությունը պետք է անհաշտ պայքար ծավալի ռասայական տեսության դեմ, որը ձգտում է «բարձր» ռասաների գաղութային երկրներում հաստատվելը «գիտական» հիմքերի վրա դնելու։

3. Ընկեր Ստալինը խոսելով լեզվի վերնաշենքային երևույթ չլինելու մասին ասել է.

«Եթե փոխվում ու լիկվիդացվում է բազիսը, ապա դրանից անմիջապես հետո փոխվում և լիկվիդացվում է նրա վերնաշենքը. եթե նոր բազիս է ծնվում, ապա դրանից անմիջապես հետո ծնվում է նրան համապատասխանող վերնաշենքը։

Լեզուն այդ տեսակետից արմատապես տարբերվում է վերնաշենքից»[1]։

Մի այլ տեղում ընկեր Ստալինը եզրակացնում է, որ «Լեզուն շփոթել վերնաշենքի հետ, նշանակում է թույլ տալ լուրջ սխալ»[2]։

Արխեոլոգիան թեև անմիջապես լեզվի ուսումնասիրությամբ չի զբաղվում, բայց նա ուսումնասիրում է հին մարդկանց՝ քարերի և այլ առարկաների վրա պրի առած «խոսքը», գրավոր հիշատակարանները, հին արձանագրությունները և ընդհանրապես գրերի պատմությունը։

---

1 Ի. Վ. Ստալին, «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը», էջ 10—11։
2 Նույն տեղում, էջ 24։

Այստեղ ևս սխալ կերպով սովետական հնագիտության մեջ գրերն ամենուրեք համարվել են վերնաշենքային երևույթ, բայց ինչպես լեզուն, այնպես էլ գրերը վերնաշենքային չեն, որովհետև նրանք երկուսն էլ հասարակական ֆորմացիաների հետ չեն ծնվում և նրանց հետ էլ չեն լիկվիդացվում։

Օրինակ, հայկական գրերը առաջ են եկել ֆեոդալիզմի շրջանում, իրենց գոյությունը պահպանել են կապիտալիզմի դարաշրջանում և այժմ էլ սոցիալիզմին մեծ ծառայություն են մատուցում մեր երկրում կոմունիզմ կառուցելու ժամանակ։

Նշանակում է, լեզվի հետ միասին գրերը ևս վերնաշենքային երևույթ չեն և սովետական հնագիտության հերթական անելիքն է ինչպես այդ, այնպես էլ նման այլ սխալներն ուղղել առաջիկա աշխատանքների ընթացքում։

4. Ն. Մառի ստադիալ զարգացման հետ է կապված նաև լեզուների խաչավորման այն տեսությունը, որ իբրև թե երկու լեզուներ խաչավորվելու դեպքում նրանց միացումից առաջ է գալիս մի նոր՝ երրորդ լեզու, որ բոլորովին նման չի լինում միացող լեզուներից և ոչ մեկին։

Այս սխալ տեսակետի հիման վրա հնագետները ցեղերի և ժողովուրդների ծագումը բացատրում էին սխալ կերպով։

Նրանք հայտարարում էին, որ տոհմերի և ցեղերի միացումից առաջ է գալիս բոլորովին մի նոր ժողովուրդ, որն իր բաղադրիչ ցեղերից և ոչ մեկին նման չի։

Ընկեր Ստալինն այս հարցի վերաբերյալ ևս տվեց իր սպառիչ պատասխանը, որն ուղեցույց է հանդիսանալու ժողովուրդների ծագման հարցերը վերլուծելու համար։

Ընկեր Ստալինը գրել է.

«Միանգամայն սխալ կլիներ կարծել, որ ասենք, երկու լեզուների խաչավորման հետևանքով ստացվում է մի նոր՝ երրորդ լեզու, որը նման չէ խաչավորվող լեզուներից և ոչ մեկին և որակապես տարբերվում է նրանցից յուրաքանչյուրից։ Իրականում, խաչավորման դեպքում լեզուներից մեկը սովորաբար հաղթող է դուրս գալիս, պահպանում է իր քերականական կառուցվածքը, պահպանում է իր բառային հիմնական ֆոնդը և շարունակում է զարգանալ իր զարգացման ներքին օրենքներով, իսկ մյուս լեզուն աստիճանաբար կորցնում է իր որակը և աստիճանաբար մահանում»[1]։

Ընկեր Ստալինի այս ցուցումը հնարավորություն է ստեղծում տեսնել ժողովուրդների նախահայրերին դեռևս տոհմատիրական կարգերում, երբ միայն ցեղեր կամ տոհմեր գոյություն ունեին և հերքել Ն. Մառի կեղծ գիտական և վուլգար մեկնաբանությունները ժողովուրդների ծագման մասին։

5. Ընկեր Ստալինը, խոսելով լեզվի ծագման և հետագա զարգացման ընթացքի մասին՝ տոհմային լեզուներից դեպի ցեղային լեզուները, ցեղային լեզուներից դեպի ժողովուրդների լեզուները և ժողովուրդների լեզուներից դեպի ազգային լեզուները տվել է հասարակական կյանքի զարգացման ընթացքը, որ պետք է կիրառել նաև հնագիտական ուսումնասիրությունների մեջ, մանավանդ որ մինչև այժմ այդ բնագավառում չի եղել վերջնականապես ճշտված և բոլորի կողմից ընդունված տեսակետ։ Ընկեր Ստալինի այդ ցուցումների հիման վրա պետք է վերակառուցել մարդկային հասարակության հնագույն շրջանի պատմությունը։

[1] Ի. Վ. Ստալին, «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը», էջ 66։

6. Ընկեր Ստալինն իր հանճարեղ աշխատության մեջ սովորեցրել է մեզ՝ ուսումնասիրել կոնկրետ նյութը, անալիզի ենթարկել այն, որոշել առանձնահատուկ կողմերը, երևույթները քննել իրենց կոնկրետ միջավայրում։ Խոլոպովին ուղղած պատասխանի մեջ ընկեր Ստալինը գրել է.

«Տիրացուներն ու թալմուդիստները մարքսիզմը, մարքսիզմի առանձին հետևություններն ու ֆորմուլաները դիտում են իբրև դոգմաների հավաքածու, որոնք «երբեք» չեն փոփոխվում, չնայած հասարակության զարգացման պայմանների փոփոխմանը։ Նրանք կարծում են, որ եթե սերտեն այդ հետևություններն ու ֆորմուլաները և սկսեն դրանք ծուռումուռ մեջ բերել, ապա նրանք ի վիճակի կլինեն լուծելու ամեն մի հարց, հույս ունենալով, որ սերտած հետևություններն ու ֆորմուլաները նրանց պետք կգան բոլոր ժամանակների ու երկրների համար, կյանքի բոլոր դեպքերում»[1]։

Դրան հակառակ, Ն. Մառը կոնկրետ առարկաներին և նյութին գրեթե որևէ կարևորություն չէր տալիս։

Հնագիտության մեջ առարկաների կոնկրետ ուսումնասիրությունը շատ մեծ նշանակություն ունի, որովհետև այդ առարկաների միջոցով ենք ծանոթանում տոհմերի, ցեղերի և ժողովուրդների ինչպես կյանքի բոլոր կողմերին, այնպես էլ կուլտուրային և սովորություններին, այլ ցեղերի և ժողովուրդների հետ ունեցած հարաբերություններին և այլն։ Նշանակում է, սովետական հնագիտության համար պատմական առարկաները ինքնանպատակ չեն, այլ նրանք իրենց դարաշրջանի կյանքի բացահայտող վկաներն են, պատմության աղբյուրը։

Կար ժամանակ, երբ հնագիտությունը զբաղվում էր միայն գեղեցիկ առարկաների նկարագրությամբ և իսպառ մտահոգված չէր այդ առարկաների միջոցով պարզելու հին ցեղերի և ժողովուրդների կյանքի մանրամասնությունները։ Այդտեղ հնագիտական առարկան ինքնանպատակ էր։ Սովետական հնագիտությունը ինքնանպատակ հնագիտական առարկաներ չի ընդունում, ամեն մի առարկա ծառայում է մարդկային հասարակության պատմության այս կամ այն կողմի պարզաբանմանը։ Դրա համար էլ սովետական հնագետների ուսումնասիրությունների մեջ պեղածո հնագիտական առարկաների քննությունը խիստ կարևոր, կարելի է ասել, առաջնակարգ տեղ է գրավում, որովհետև նրա վրա են հիմնվում ընդհանրացումներն ու եզրակացությունները։

Դրան հակառակ, Ն. Մառի աշխատություններում հնագիտական նյութի և գտնված առարկաների քննությունը իսպառ բացակայում է։ Օրինակ, նրա մեծածավալ «Անի» աշխատությունը բաղկացած է երկու մասից։ Առաջինում տրված է քաղաքի մատենական պատմությունը՝ գրված գրավոր աղբյուրների հիման վրա, իսկ երկրորդում՝ պեղումների նկարագիրը, առանց գտնված առարկաների քննության։ Այդ բացը պատահականություն չէ, այլ արդյունք է, ինչպես ասացինք, կոնկրետ առարկաներն ու երևույթներն անտեսելուն։ Այդ պատճառով էլ Անիի պեղումներից դուրս եկած նյութը գրեթե դեռևս ուսումնասիրված չի, թեև Անիի պեղումների մասին յույս են տեսել բազմաթիվ աշխատություններ։ Մինչև այժմ չեն ուսումնասիրված Անիի պեղումներից հայտնագործված դրամները, մետաղը, բանվածքները, զենքի տեսակները, քաղաքի արհեստները, կերամիկան և այլն։ Ն. Մառն իր եզրակացությունները չի հիմ-

[1] Ի. Վ. Ստալին, «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը», էջ 124—125։

նավորել կոնկրետ նյութի վրա, դրա համար էլ նրա աշխատությունների մեջ կան նաև պատմա-հնագիտական բնույթի բազմաթիվ սխալներ։

Ն. Մառը մերժելով հնագիտական նյութի մասնագիտական ուսումնասիրությունը, մերժել է նաև այդ նյութն ուսումնասիրելու ընդունված մեթոդները։ Նա բոլորովին դեմ էր պատմա-համեմատական և ուսումնասիրության ենթակա նյութի տիպոլոգիական քննության մեթոդին։

Ինչպես ընկեր Ստալինն է ասել, «Ն. Յա. Մառը ճղճղան կերպով նշավակում է պատմա-համեմատական մեթոդը որպես «իդեալիստական»։ Այնինչ, պետք է ասել, որ պատմա-համեմատական մեթոդը, չնայած իր լուրջ թերություններին, այնուամենայնիվ, ավելի լավ է, քան Ն. Յա. Մառի իրոք իդեալիստական քառատարր վերլուծությունը, որովհետև առաջինը մղում է դեպի աշխատանք, դեպի լեզուների ուսումնասիրություն, իսկ երկրորդը մղում է լոկ այն բանին, որ պառկեն տաք տեղ և սրճի մրուրի մեջ գուշակություններ անեն տխրահռչակ չորս տարրերի շուրջը»[1]։

Ընկեր Ստալինի «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» աշխատությունը չափազանց մեծ կարևորություն ունի նաև Հայաստանի միջնադարյան պատմության վերաբերյալ Մառի սխալ, հակամարքսիստական տեսակետները մերկացնելու համար։ Այդ հարցն առանձնապես կարևոր է, որովհետև Ն. Մառը երկար տարիներ աշխատել է Հայաստանում։ Սակայն, քանի որ առաջներում արդեն առիթ ունեցել ենք այդ հարցերի շուրջը արտահայտվելու, այստեղ չենք կրկնի[2]։

Մառը հայ ժողովրդի պատմության և կուլտուրային մոտեցել է աբստրակտ կերպով և նկատի չի առել, որ ինքը գործ ունի մի կոնկրետ ժողովրդի և նրան պատկանող կուլտուրայի հետ։ Դրա համար էլ հաճախ նա գովերգել է օտար զավթիչների՝ սելջուկների և թյուրքական ցեղերի տիրապետությունը։

Այսպես, օրինակ, Ն. Մառի կարծիքով սելջուկների ավերիչ արշավանքը խիստ դրական երևույթ էր Հայաստանի համար, որը սոցիալական նոր միջավայր ստեղծեց և հնարավորություն տվեց նոր կյանքի վերածնության։ Բանից դուրս է գալիս, որ սելջուկները, ավերելով փրկեցին Հայաստանը։ Ն. Մառը գովերգել է Շեդդադյան ցեղապետների տիրապետությունը և թյուրքական արշավանքը, իսկ այդ բոլորին հակառակ, Բագրատունյաց թագավորների ծաղկուն շրջանը համարել է հայկական կուլտուրայի ճահճացման ժամանակաշրջան, երբ իբրև թե կրկնվել են միայն կուլտուրայի հին ձևերը։

Ընկեր Ստալինի «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» հանճարեղ աշխատությունը հնարավորություն տվեց սովետական հնագիտությանն ազատագրվելու Ն. Մառի սխալներից, որոնք Ն. Մառի «աշակերտների» կողմից ընդունվել և տարածվել էին առանց որևէ քննադատության, սկզբունքային կարևոր հարցերում մարքսիզմ-լենինիզմի հիմունքները փոխարինվել էին Ն. Մառի իդեալիստական և վուլգար մատերիալիստական հայացքներով։

Այժմ սովետական հնագետների պարտքն է իրենց առօրյա աշխատանքների ընթացքում, ղեկավարվելով ընկեր Ստալինի հանճարեղ ցուցմունքներով՝ բացահայտել ինչպես Ն. Մառի, այնպես էլ իրենց սխալները, որպեսզի սովետական արխեոլոգիական գիտությունն առաջ ընթանա առանց կաշկանդումների Մարքսի—Էնգելսի—Լենինի—Ստալինի նշած ուղիով։

---

[1] Ի. Վ. Ստալին, «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը», էջ 74—75։

[2] Կ. Ղաֆադարյան, «Դվին քաղաքը և նրա պեղումները», Երևան, 1952, էջ 8—9, 262—263 և 272—273։